

ՀՀ Արագածոտնի մարզպետարան

(ոլորտի կամ պետական մարմնի անվանումը)

2014-2016

**ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ
ԾՐԱԳՐԻ (ՄԺԾԾ) ՀԱՅՏ**

1. Իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները¹

ՀՀ Արագածոտնի մարզում գործում է 119 հանրակրթական դպրոց, որից՝ 79 միջնակարգ, 40 հիմնական, 1 մարզադպրոց, 1 հատուկ՝ Աշտարակի տարածաշրջանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար:

Մարզի հանրակրթական դպրոցներում 11 աշակերտ ստանում է տնային ուսուցում:

Մարզի հարթավայրային գոտում տեղաբաշխված է 58, լեռնային գոտում՝ 22, բարձր լեռնային գոտում՝ 39 դպրոց:

Մարզում գործում է համայնքային ենթակայության 26 մանկապարտեզ և համայնքային ենթակայության-4, մարզպետարանի ենթակայության դպրոցներում-20 նախակրթարան:

19 նախակրթարան բացվել է ՀՀ ԿԳՆ ԾԻԳ-ի «Կրթության մատչելիության ապահովում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում, որից 4-ը համայնքային ենթակայության են:

3 նախակրթարան բացվել է «Շեն» բարեգործական ծրագրի շրջանակներում:

3 նախակրթարան «Վորլդ Վիժն» միջազգային բարեգործական կազմակերպության և 1 նախակրթարան Ամերիկյան «Յուսեյք» բարեգործական կազմակերպության միջոցներով:

Նախադպրոցական կրթությունը Հայաստանի Հանրապետությունում կրթության համակարգի սկզբնական, բաղկացուցիչ մասն է: Ըստ նախադպրոցական կրթության հայեցակարգի և ուղղակարգության՝ պետք է ապահովվի բազմաֆունկցիոնալ նախադպրոցական կրթական հաստատությունների գործարկումը տարբերակված ծրագրերով (այլընտրանքային ծառայություններով), ինչպես նաև խթանվի տարաբնույթ նախադպրոցական կրթական ծառայությունների ներդրումը քաղաքային և գյուղական համայնքներում:

1.1. Ոլորտի (համակարգի) ընդհանուր նկարագիրը.

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի իրավասության ներքո մատուցվող ծառայությունների շրջանակի նկարագրության ամփոփ աղյուսակ			
N	Ծառայությունների շրջանակի նկարագրություն	Շահառուների շրջանակի նկարագրություն	Պետական հատվածի կողմից ծառայության փոխհատուցման ծավալը ²
1.	Հանրակրթական ուսուցում	6-17 տարեկան	Պետբյուջեի հաշվին ամբողջ

¹ Փաստաթղթի լրացման համար անհրաժեշտ ցուցումները ներկայացված են շեղատարերով: Ցուցումները չպետք է ներառվեն ներկայացվող ՄԺԾ հայտում:

² Նշվում է, թե տվյալ ծառայության փոխհատուցումը պետական բյուջեի հաշվին երաշխավորվում է ամբողջ ծավալով, թե որոշակի սահմաններում:

			ծավալով
2.	Հատուկ կրթություն	6-17 տարեկան հատուկ կրթության կարիք ունեցող երեխաներ	Պետբյուջեի հաշվին ամբողջ ծավալով
4.	Արտադպրոցական դաստիարակություն	6-17 տարեկան	Պետբյուջեի հաշվին ամբողջ ծավալով
5.	Նախակրթական ուսուցման կազմակերպում	5-6 տարեկան	Պետբյուջեի հաշվին ամբողջ ծավալով
6.	Տրանսպորտային միջոցների փոխհատուցում	137 աշակերտ	Պետբյուջեի հաշվին ամբողջ ծավալով

1.2. Վերջին երկու տարիների ոլորտի (համակարգի) զարգացման միտումները

Իր ընդգրկվածությամբ հանրակրթական ոլորտն ունի ամենամեծ շահառուների խումբը և, ըստ էության, կրթական այս մակարդակում ծառայությունները գրեթե հավասարաչափ մատչելի են բնակչության բոլոր խմբերի համար:

2012-2013 թթ. մարզում գործող 119 հանրակրթական դպրոցներում դասարանների տարեկան թիվը կազմում է 1216, աշակերտ թիվը 17007:

ՀՀ կառավարության 2002թ. մայիսի 20-ի թիվ 593 որոշմամբ հաստատված «ՀՀ հանրակրթական դպրոցների հիմնանորոգման և բարելավման համալիր» ծրագիրը հիմք է ընդունվել 2014-2016թթ ՄԺԾԾ կրթական հաստատությունների ուսումնական շենքով ապահովվածության և դրանց հիմնանորոգման անհրաժեշտության վերաբերյալ հաշվարկների համար:

Մարզում ներառական կրթության կարիք ունեցող և համապատասխան վկայագրեր ունեցող երեխաներ:

1.3. Հիմնական խնդիրները

Մարզում տվյալ ոլորտի համար հիմնական խնդիրներն են մարզի համայնքներում դպրոցահասակ երեխաների հանրակրթական ուսուցման կազմակերպումը ,որի արդյունքում համաձայն ՀՀ կառավարության ռազմավարական ծրագրում / հատկապես աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում/ նախատեսվել է ավելացնել մանկավարժների,վարչական և սպասարկող անձնակազմի միջին ամսական աշխատավարձը,այն մոտավորապես մոտեցնելով 1 շնչին բաժին ընկնող տարեկան ՀՆԱ-ի չափին :

2. Կրթության լրրոտի (համակարգի) նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում

2.1. Նպատակները

Կրթության ոլորտի հիմնական նպատակներն են.

1. Մարզի համայնքներում դպրոցահասակ երեխաների հանրակրթական ուսուցման կազմակերպում:

2. Արտադպրոցական ուսուցման կազմակերպում:

3. Նախակրթական ուսուցման կազմակերպում:

4. Հատուկ կրթության կազմակերպում

5. Տրանսպորտային միջոցներով տեղափոխման կազմակերպում:

ՄԺԾԾ ժամանակահատվածում 2016թ. նախատեսվում է իրականացնել հանրակրթական բարեփոխումներ և ռազիոնալացում: Նշված ժամանակահատվածում կիրականացվի հանրակրթական դպրոցական շենքերի և կաթսայատների հիմնանորոգում:

Դասարանների խտությունը ՄԺԾԾ ժամանակահատվածում նախատեսվում է 14 աշակերտ, այն պայմանավորված է համայնքների տեղաբաշխման առանձնահատկությամբ:

2.2. Գերակայությունները

2014-2016 թթ ՄԺԾԾ ժամանակահատվածում նախատեսված գերակա ուղղություն են հանդիսանում՝ տարրական, հիմնական, միջնակարգ ընդհանուր կրթության, մասնագիտական կրթության մատուցած ծառայությունների որակի և արդյունավետության բարձրացումը, արտադպրոցական դաստիարակության ոլորտում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար այլընտրանքային ծառայությունների մատուցումը:

Գերակա ուղղություն			Հիմնավորում՝ համապատասխան հղումներով կառավարության տնտեսական և քաղաքական ծրագրերին ³
2014	2015	2016	
1	Տարրական, հիմնական, միջնակարգ ընդհանուր կրթության մատուցած ծառայությունների որակի և արդյունավետության բարձրացում		ՀՀ կառավարության <Աղքատության հաղթահարման ռազմավարական> ծրագիրը
2	Մասնագիտական կրթության մատուցած ծառայությունների որակի և արդյունավետության բարձրացում		ՀՀ կառավարության <Աղքատության հաղթահարման ռազմավարական> ծրագիրը
3	Արտադպրոցական դաստիարակության ոլորտում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար այլընտրանքային ծառայությունների մատուցում:		ՀՀ կառավարության <Աղքատության հաղթահարման ռազմավարական> ծրագիրը

³ օրինակ՝ հղում ԱՀՌԾ համապատասխան դրույթին

3. 2014-2016 թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում ոլորտում (համակարգում) իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

3.1. Գոյություն ունեցող ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

Մարզի հանրակրթության ոլորտում գործող ծրագրերն են.

1. Հանրակրթական ուսուցում
2. Հատուկ կրթություն
3. Մասնագիտացված ուսուցում
4. Նախակրթական ուսուցում
5. Տրանսպորտային ծառայությունների մատուցում
6. Կրթական օբյեկտների հիմնանորոգում

Նշված ծրագրերով նախատեսված ծախսերի իրականացումը կնպաստի կրթության ոլորտում գերակայությունների և ընդհանուր նպատակների իրականացմանը:

Կրթության ոլորտում իրականացվող ծրագրերի գծով ծախսերի հիմնական մասը նպատակաուղղված է համակարգի արդյունավետության բարձրացմանը ,ինչպես նաև հանրակրթության ուսցիանալացման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների արդյունավետության բարձրացմանը:

4. Ոլորտի (համակարգի) պետական հատվածի եկամուտները (բացառությամբ պետական բյուջեից ստացվող եկամուտների)

Կրթության ոլորտի պետական հատվածում գործող կազմակերպությունների կողմից 2014-2016թթ իրականացվելիք ֆինանսատնտեսական գործունեության արդյունքով ստացվող եկամուտները ներկայացվում են կից հավելվածում: